

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան»
տեխն. գ. դ. պրոֆեսոր



«Հաստատում եմ»
հիմնադրամի ռեկտոր,
Ռ. Ռ. Սահակյան

2022 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Անի Դավիթի Աբրահամյանի « Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն» խորագրով ԺԳ 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Անի Դավիթի Աբրահամյանի «Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի նիստում (Արձ. թիվ 7, կայացած՝ 31.10.2022թ.):

Մասնակցում էին Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մ.գ.թ. դոցենտ Լ. Բաղդասարյանը, ամբիոնի աշխատակիցներ՝ մ.գ.դ. պրոֆեսոր Պ. Գևորգյանը, հ. գ. թ. դոցենտներ՝ Հ. Ավագիմյանը, Վ. Միրզոյանը, Մ. Մազմանյանը, Ա. Ղազարոսյանը, մ.գ.թ. դոցենտներ՝ Լ. Հարոյանը, Ա. Հովհաննիսյանը, Ս. Բեժանյանը, Ա. Հարությունյանը, Ք. Վիրաբյանը, ասիստենտ՝ մ.գ.թ. Լ. Մարությանը, դասախոսներ՝ մ.գ.թ., Լ. Դանիելյանը, Տ. Սալումյանը:

Թեմայի արդիականությունը ատենախոսը ներկայացրել է այն գիտական հիմնավորմամբ, որ Հայաստանը դեռևս ազգային կրթության համակարգի պահպանման ու զարգացման, ինչպես նաև միջազգային կրթական ասպարեզում մրցունակության ապահովման խնդիրներ ունի: Նշել է, որ Հայաստանի բարձրագույն կրթության

համակարգի անընդհատ կատարելագործումը մտավոր ներուժի արտահոսքի կանխման ուղի է: Հեղինակը ընդգծել է, որ տարբեր երկրների կրթության համակարգերի ուսումնասիրությունը, նրանց կառավարման համեմատական վերլուծությունը լուծում է երկու կարևոր խնդիր՝ ճանաչողական և առաջավոր փորձի փոխանակման: Համեմատական վերլուծության է ենթարկել Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության կառավարման համակարգերը՝ նպատակ ունենալով բացահայտել դրանց նմանություններն ու տարբերությունները, ձեռքբերումներն ու խնդիրները:

Ներածության մեջ հեղինակը հստակ սահմանել է հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության գիտական նորույթը, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ *«Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի կառավարումը»* խորագրով, բաղկացած է վեց ենթագլխից:

Առաջին՝ *«Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի նպատակը, խնդիրները, կառուցվածքը»* ենթագլխում ներկայացված են ՀՀ բարձրագույն կրթության ներկայիս համակարգի ձևավորումը, կառուցվածքը, ինչպես նաև համակարգում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների տեսակները և առանձնահատկություններն ըստ իրավակազմակերպական կարգավիճակների:

Երկրորդ՝ *«Կրթական քաղաքականությունը և օրենսդրական դաշտը Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ոլորտում»* ենթագլխում ներկայացված են պետական կրթական քաղաքականության նպատակները, խնդիրներն ու սկզբունքները բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում: Վերլուծված է ոլորտը կարգավորող օրենսդրությունը, վեր են հանվել օրենսդրության մեջ առկա հակասությունները և բացթողումները:

Երրորդ՝ *«Բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետությունում»* ենթագլխում ներկայացված և վերլուծված են պետական ֆինանսավորման ծավալները և ուղիները: Խոսվել է նաև բուհերի ֆինանսական ինքնավարության մասին:

Չորրորդ՝ *«Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի կառավարման առանձնահատկությունները»* ենթագլխում ներկայացված են բուհերի

կառավարման գործընթացները, պետական կառավարման մարմինների մասնակցությունը կառավարման գործընթացներին, ինչպես նաև ներբուհական կառավարումը բուհի գործունեության հիմնական ուղղություններով:

Հինգերորդ՝ *«Որակի ապահովման գործընթացը Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում»* ենթազլխում ներկայացված են ՀՀ-ում որակի ապահովման համակարգն ու որակի ապահովման գործընթացները: Բացահայտվել են նաև ՀՀ-ում հավատարմագրման գործընթացին առնչվող օրենսդրական ու ենթօրենսդրական փաստաթղթերում առկա հակասությունները:

Վեցերորդ՝ *«Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումները, ինտեգրացիոն և ինովացիոն գործընթացները. բոլոնյան գործընթաց»* ենթազլխում ներկայացված են ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի փոփոխությունները:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ *«Անզլիայի բարձրագույն կրթության համակարգի կառավարումը»* խորագրով, բաղկացած է վեց ենթազլխից:

Առաջին՝ *«Անզլիայի բարձրագույն կրթության համակարգի նպատակը, խնդիրները, կառուցվածքը»* ենթազլխում ներկայացված են Անզլիայի բարձրագույն կրթության համակարգի կառուցվածքն ու առանձնահատկությունները, բարձրագույն կրթություն իրականացնող հաստատությունների տեսակները և նրանց առանձնահատկությունները:

Երկրորդ՝ *«Կրթական քաղաքականությունը և օրենսդրական դաշտը Անզլիայի բարձրագույն կրթության ոլորտում»* ենթազլխում ներկայացված են Անզլիայի պետական կառավարման առանձնահատկությունները:

Երրորդ՝ *«Բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորումը Անզլիայում»* ենթազլխում ներկայացված է Անզլիայի բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորման առանձնահատկությունները:

Չորրորդ՝ *«Անզլիայի բարձրագույն կրթության համակարգի կառավարման առանձնահատկությունները»* ենթազլխում ներկայացված են բուհերի կառավարման համակարգերն ու դրանց առանձնահատկությունները: Ներկայացված է նաև ներբուհական կառավարումը:

Հինգերորդ՝ «Որակի ապահովման գործընթացը Անզլիայի բարձրագույն կրթության համակարգում» ենթազխում ներկայացված են Անզլիայի բարձրագույն կրթության համակարգում որակի ապահովման գործընթացները:

Վեցերորդ՝ «Անզլիայի բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումները, ինտեգրացիոն և ինովացիոն գործընթացները, բոլոնյան գործընթաց» ենթազխում ներկայացված են բարեփոխումներն ու ինովացիաները Անզլիայի բարձրագույն կրթության ոլորտում: Հատկանշական է, որ Անզլիայի բարձրագույն կրթության համակարգում մշակվել են ինովացիաների ուղղություններ:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Բարձրագույն կրթության համակարգերի կառավարման առանձնահատկությունները Հայաստանում և Անզլիայում» խորագրով, բաղկացած է երեք ենթազխից, որտեղ ներկայացված են հետազոտության ընթացքում կատարված վերլուծությունների արդյունքները:

Առաջին՝ «Հայաստանի և Անզլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման նմանությունները» ենթազխում ներկայացված են երկու երկրների բարձրագույն կրթության համակարգերի նմանությունները:

Երկրորդ՝ «Հայաստանի և Անզլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման տարբերությունները» ենթազխում հեղինակը հիմնավորել է երկու երկրների բարձրագույն կրթության համակարգերի կառավարման տարբերությունները:

Հետաքրքրական է Երրորդ՝ «Բարձրագույն կրթության համակարգի ինստիտուցիոնալ ու համակարգային կառավարման մեխանիզմների առաջարկ» ենթազխուիլը, որտեղ ներկայացված է Անզլիայի բարձրագույն կրթության համակարգի կառավարման մեխանիզմի առաջավոր փորձը՝ տեղայնացնելով Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի կառավարման գործընթացում: Հեղինակը ենթադրում է, որ մշակված բարձրագույն կրթության համակարգի կառավարման նոր մեխանիզմի իրագործման դեպքում կունենանք ձեռքբերումներ, նշենք մի քանիսը.

1. ներպետական հավասար մրցակցային պայմաններում գործող բուհեր,
2. կրթության համադրելի աստիճաններ ԵԲԿՏ շրջանակում,
3. բուհերի մրցակցային ֆինանսավորման համակարգ,
4. բուհի ընդունելության բաց համակարգ.

5. համատեղ կրթական ծրագրեր պետության ներսում,
6. մասնագիտական ոլորտի վրա կենտրոնացված կրթություն:

Ատենախոսության հիմնախնդրի վերաբերյալ կատարած գիտատեսական և գիտագործնական հետազոտության արդյունքները, նրանում առաջադրված խնդիրներն ամփոփվել և իրենց լուծումն են գտել եզրակացությունում: Ատենախոսության հիմնական դրույթները հեղինակի կողմից արտացոլվել են հրատարակված յոթ անուն աշխատություններում: Հեղինակն օգտվել է հայրենական, օտարալեզու և համացանցային 96 ժամանակակից աղբյուրներից:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարած գիտական աշխատանքը, նրա կարևորությունն ու տեսագործնական արժեքը, հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում.

1. Ներածության մեջ ձևակերպված չէ հետազոտության վարկածը, ինչը կարծում ենք գիտահետազոտական աշխատանքի համար կարևոր է և նպաստում է խնդրի հստակեցմանը, ինչպես նաև արդյունքների հավաստիությանը:
2. 3-րդ գլխի 3-րդ ենթագլխի վերնագիրը անհրաժեշտ էր ավելի հստակ ձևակերպել:
3. Եզրակացությունների 6-րդ կետը կարելի է մի փոքր ընդարձակել, որպեսզի իմաստը ավելի ըմբռնելի լինի:
4. Աշխատանքում կան լեզվական և տեխնիկական վրիպակներ, ինչին ևս պիտի ուշադրություն դարձնել:

Վերոնշյալ նկատառումները չեն ազդում ատենախոսության արժեքի վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքների հավաստիությունն ու հետևությունների հիմնավորումը թույլ են տալիս եզրակացնել, որ Անի Դավիթի Աբրահամյանի «Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն» խորագրով ատենախոսությունը

ավարտուն, ինքնուրույն աշխատանք է, համապատասխանում է ՀՀ գիտական
աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ 00.01
«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին, իսկ
ատենախոսն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհման:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ,

Մ. գ. թ., դոցենտ  Լ. Գ. Բադալյան

Լ. Գ. Բադալյանի ստորագրությունը հաստատում եմ

ՎՊՀ-ի գերարտոլորտ,

Մ. գ. թ., դոցենտ  Ս. Ս. Բեժանյան

